ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

ՀՀ ԳԱԱ 70-ամյա հոբելյանին էր նվիրված երիտասարդ լեզվաբանների երրորդ հանրապետական գիտաժողովը, որը տեղի ունեցավ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում (ԼԻ) հոկտեմբերի 2-ին և 3-ին: Գիտաժողովին մասնակցում էին ոչ միայն ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողներն ու հայցորդները, այլև ներկայացուցիչներ Երևանի պետական համալսարանից (ԵՊՀ), Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանից (ՀՊՄՀ), Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանից (ԵՊԼՀ), Մաշտոցի անվան Մատենադարանից ու Էջմիածնի Գևորգյան ճեմարանից:

Գիտական նստաշրջանի բացման խոսքով հանդես եկավ լեզվի ինստիտուտի տնօրեն, բ. գ. թ., դոցենտ Վիկտոր Կատվալյանը*: Երիտասարդական գիտաժողովների անցկացումը կարևորելով՝ նա նշեց, որ նման միջոցառումները երիտասարդներին հնարավորություն են տալիս գիտական առաջին քայլերն անելու և ինքնադրսևորվելու: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև երիտասարդ լեզվաբանների խորհրդի նախագահ* Տիգրան Սիրունյանը*:*

Երկօրյա նստաշրջանի չորս նիստերի ընթացքում տարբեր զեկուցումներով հանդես եկան շուրջ երկու տասնյակ երիտասարդ լեզվաբաններ, այդ թվում՝ յոթ բանասիրական գիտությունների թեկնածու: Զեկուցումներն աչքի ընկան թեմատիկ բազմազանությամբ՝ ընդգրկելով ժամանակակից հայերենի, հայոց լեզվի պատմության, բարբառագիտության, ընդհանուր լեզվաբանության, ինչպես նաև արևմտահայերենի ոլորտները:

Նշանակալի էին հայոց լեզվի պատմության *տարբեր շրջաններին վերաբերող և գիտական արժեք ներկայացնող զեկուցումները, որոնք նոր խոսք էին հայոց լեզվի պատմությունն ուսումնասիրողների համար: Գիտաժողովը սկսեց բ. գ. թ.* Վալենտին Խաչատրյանը *(ԼԻ)՝ « 5–12-րդ դարերի ձեռագիր հիշատակարանների բառապաշարը» զեկուցմամբ՝ ներկայացնելով հետգրաբարյանից մինչև միջին շրջանն ընկած ձեռագրերի հիշատակարանների բառապաշարային իրողությունների զարգացման ընթացքը: Հայոց լեզվի պատմության միջին փուլի խոնարհման առանձնահատկություններին անդրադարձավ ԵՊՀ-ի ասպիրանտ և Մատենադարանի գիտաշխատող* Խաչիկ Հարությունյանը *«Խոնարհումը 14–15-րդ դարերի հիշատակարաններում» զեկուցմամբ: Ուշ միջնադարի փոխառյալ բառերի քննությանն էր վերաբերում բ. գ. թ.* Հասմիկ Թադևոսյանի *(ԼԻ) « Փոխառյալ բառերի կիրառությունը 17-րդ դարի բժշկարաններում (Ասար և Բունիաթ Մեբաստացիներ)» զեկուցումը: ՀՊՄՀ ասպիրանտ* Ռուզաննա Սահակյանը *հանդես եկավ «Բայաձևերի գործածությունը Եսայի Հասան-Ջալալյանցի «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» երկում (18-րդ դ.)»*

թեմայով՝ արձանագրելով հեղինակի՝ դասական գրաբարի բայաձևերին հետևելու փաստը: Ուշագրավ էր նաև Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սան և ԼԻ հայցորդ Վաղինակ Իորդանյանի *« Նոր կտակարանի լեզուն և ոճը» զեկուցումը:*

Հայերենի բարբառների *հարուստ լեզվանյութին առնչվող արժեքավոր զեկուցումներով հանդես եկան* Սոնա Միքայելյանը *(ԼԻ)՝ «Անտիոքի հայերեն բարբառներում արաբական փոխառությունների ձայնավորների դրսևորումները», բ. գ. թ.* Գարիկ Մկրտչյանը *(ԼԻ)՝ «Սեռական-տրական հոլովների հոլովական զուգաձևությունները միջին հայերենի և Մշո բարբառի տվյալների հաշվառմամբ», ԵՊՀ հայցորդ* Արմինե Օլեյանը *«Մարմնի մասեր իմաստային խումբը Շիրակի խոսվածքներում»:*

Ընթերցվեցին նաև ընդհանուր լեզվաբանության *տարբեր հարցերին վերաբերող զեկուցումներ: Արժեքավոր էր հատկապես* Մերի Սարգսյանի *(ԼԻ) «Ջահուկյանի տերմինակազմության առանձնահատկությունները» թեմայով զեկուցումը, որտեղ անդրադարձ եղավ հայ ականավոր լեզվաբան, ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի կողմից ստեղծված լեզվաբանական տերմիններին: Ընդհանուր լեզվաբանության գիտաճյուղերից մեկին՝ լեզվափիլիսոփայությանն էր վերաբերում բ. գ. թ.* Տիգրան Սիրունյանի *(ԼԻ) «Արտալեզվի ըմբռնումը համեմատական մոտեցմամբ. Է. Կասիեր – Է. Աթայան» զեկուցումը: Ընդհանուր լեզվաբանության բնագավառում նորովի մեկնաբանություն էր* Սոնա Հակոբյանի *(ԵՊԼՀ) «Իրադարձությունները որպես քերականական օբյեկտներ: ԱՄՆ քաղաքական խոսույթում ներկայացված 1915 թ. իրադարձությունների լեզվական ուսումնասիրություն» զեկուցումը: Թարգմանության լեզվական առանձնահատկություններն էին արծարծում ԼԻ հայցորդներ* Ելենա Հայրիկյանի *«Գաբրիել Գարսիա Մարկեսի «Սերը Խոլերայի ժամանակ» երկում կիրառված դարձվածային միավորների հայերեն թարգմանությունը» և* Լուսինե Մուրադյանի *« Անգլերենի մոդալ բայերի ժամանակաձևային արտահայտությունը հայերենում և ռուսերենում» զեկուցումները:*

Ժամանակակից հայերենի *հիմնախնդիրներին վերաբերող զեկուցումներ ևս եղան: Արդի հայերենի գրական նորմավորման հարցերն էին քննվում բ. գ. թ.* Լուսինե Ղամոյանի *(ԼԻ) «Իրադրային բառերն ու արտահայտությունները փոխադրամիջոցներում (քաղաքային տրանսպորտ)» զեկուցման մեջ: Առանձին գրողների ստեղծագործությունների լեզվառճական առանձնահատկություններին էին վերաբերում բ. գ. թ.* Մերի Հովհաննիսյանի *(ԵՊՀ) «Զնաբանական իրողությունների ոճական առանձնահատկությունները Տերյանի խոսքարվեստում» և ԵՊՀ հայցորդ* Անուշ Խաչատրյանի *«Պատկերավորման միջոցները Ջ. Խալափյանի երկերում» զեկուցումները:*

Արևմտահայ գրական լեզուն *էլ անմասն չմնաց. ԼԻ ասպիրանտ* Հերմինե Աբրոյանը *զեկուցեց «Պարզ պատմողական նախադասության առկայական անդամատումը արևմտահայերենում» թեմայով:*

Զեկուցումներին հաջորդեցին արծարծված հարցերին վերաբերող աշխույժ քննարկումները. առանձին հարցերի շուրջ ավագ սերնդի կողմից արվեցին որոշ դիտողություններ, եղան նաև արժեքավոր առաջարկներ:

Գիտական նստաշրջանն ավարտվեց ամփոփիչ կարծիք-ելույթներով: Բ. գ. դ., պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը *խրախուսեց այն հանգամանքը, որ երիտասարդ լեզվաբանները խորանում են լեզվական փաստական գրականության մեջ: Նա երիտասարդական գիտաժողովը դրական քայլ համարեց լեզվի ինստիտուտի պատմության մեջ՝ չմոռանալով շեշտել, որ ինստիտուտում միշտ քննվել ու ստեղծվել են գիտական արժեք ներկայացնող գործեր: Ավագ գիտաշխատող բ. գ. թ.* Մելադա Աղաբեկյանը *կարևորեց, որ այսօր երիտասարդները շարունակում են իրենց ավագ սերնդի կատարած աշխատանքները:*

Ամփոփելով երիտասարդ լեզվաբանների հանրապետական երրորդ գիտաժողովի արդյունքները՝ Վիկտոր Կատվալյանը գիտաժողովը համարեց հաջողված՝ բարձր գնահատելով զեկուցումների թեմատիկ բազմազանությունը և լեզվական բոլոր ոլորտներին անդրադարձ կատարելու իրողությունը:

ՀԱՍՄԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ